600.0090.12.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2019 թվականի №90Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի №373Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2019 թվականի մարտի 7-ին «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 1 տարի 6 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի №373Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0558 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության տարբեր տարիների գրություններով ներկայացված տեղեկատվության՝ «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար 2010 թվականից մինչ օրս իրականացվել են միայն կայանի նախագծման աշխատանքներ,

գ) Ընկերությունը 4-րդ անգամ է կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

2) 35-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը,

ե) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման նպատակներից է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը,

զ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 81-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը,

է) Որոշմամբ ԼԷ №0558 լիցենզիայով ամրագրված «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 1 տարի 6 ամսվա փոխարեն նպատակահարմար է երկարաձգել 1 տարի 4 ամսով, քանի որ դեռևս 2010 թվականի ապրիլից՝ «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման №0351 լիցենզիայի տրամադրման պահից մինչ օրս, շուրջ 9 տարի, կայանի կառուցման ուղղությամբ կատարվել են միայն կայանի նախագծման աշխատանքներ (ինչը փաստվում է Ընկերության կողմից տարբեր տարիներին Հանձնաժողով ներկայացված տեղեկանքներով), ինչի արդյունքում, ըստ էության, խախտվում է համապատասխան բնական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պահանջը (ընդ որում նույն մոտեցումը ներկայումս կիրառվում է բոլոր լիցենզավորված անձանց նկատմամբ), և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնվեց ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №373Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0558 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի ապրիլի 21-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի օգոստոսի 21-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0558 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի №O.AB.100.11CB.ESC.2.5158.17 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 2,875,000 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ գումարից 1,437,500 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2,875,000 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2020 թվականի հոկտեմբերի 5-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
12 ապրիլի 2019թ.